evocaBANK



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ

Վարկի տրամադրման նպատակը

Վարկը տրամադրվում է ուսման վարձավճարների վճարման նպատակով:

Ովքեր կարող են դիմել

Պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական ԲՈՒՀ-երի վճարովի համակարգի բակալավրի (անընդհատ և հետեգրացված կրթական ծրագրի), մագիստրոսի և կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառող ուսանողներ:

Գումար	Առավելագույնը 4,000,000 ՀՀ դրամ՝ ուսումնառության ամբողջ ընթացքում, առավելագույնը 5 մասնաբաժնով (յուրաքանչյուր ուս. տարվա համար մեկ մասնաբաժին), ընդ որում յուրաքանչյուր մասնաբաժնի գումարը՝ չի կարող գերազանցել 800,000 ՀՀ դրամը կամ մեկ ուսումնական տարվա վարձի չափը
Վարկի մարման եղանակը և ժամկետը	Ամսական անուիտետային վճարներ, ընդ որում Ուսումնառության ընթացքում մարվում են միայն տոկոսներ /առավելագույնը 5 տարի/, իսկ ուսումնառության ավարտից հետո, կատարվում են վարկի մայր գումարի և տոկոսագումարների հավասարաչափ մարումներ, սակայն ոչ ավել, քան 10 տարի ժամկետով:
Տարեկան անվանական տոկոսադրույք	9% տարեկան տոկոսադրույք, որից. 2% սուբսիդավորում, բոլոր ուսանողների համար 3% սուբսիդավորում, առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար
Վարկի տրամադրման եղանակը	Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ վարկի գումարը փոխանցելով համապատասխան ուսումնական հաստատության բանկային հաշվին: Փոխանցման համար հիմք է հանդիսանում ուսումնական հաստատության կողմից տրված և Հաճախորդի կողմից Բանկ ներկայացրած հաշիվ-ապրանքագիրը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վավերապայմաններ պարունակող):
Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում
Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում՝ վճարվող տույժեր	ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:
Վարկի վերադարձելության ապահովման միջոցները	Ուսանողի ծնողի(ների), խնամակալի(ների) կամ այլ անձանց երաշխավորություն
Գանձվող վճարներ	Առկա չէ
Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը ձևակերպվում և փոխանցվում է համապատասխան ուսումնական հաստատության բանկային հաշվին, վարկավորման և երաշխավորության պայմանագրերը/համաձայնագրերը ստորագրելուց և փոխանցման հաշիվ-ապրանքագիրը Բանկ ներկայացնելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

Թարմացվել է 26.07.23-ին

Evocabank-ը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից:

www.evoca.am +374 10 60 55 55

Available on the iPhone App Store

Android on Google play